ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱ-ՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Ֆելիքս Մովսիսյան

«ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. *Իտալիա, Հռոմ, ազատագրական պայքար, անկախություն, միավորում, Պիուս IX, հոգևոր, աշխարհիկ, իշխանություն:*

XIX դարի իտալական ազգային-ազատագրական պայքարը լայնորեն արտացոլվել է «Մասյաց աղավնի» ամսագրում, որը տպագրվել է Թեոդոսիայում: Իտալացիների ազգային պայքարին վերաբերող մի շարք հարցերի շարքում «Մասյաց աղավնի»-ն իր հրապարակումներում անդրադարձել է նաև Պիուս IX պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու խնդրին, որն առաջացել է այս պայքարի ընթացքում: Ամսագրի խմբագիր Գաբրիել վարդապետ Այվազովսկին այս խնդրին մոտեցավ կրոնական գաղափարախոսության և Իտալիայի քաղաքական միավորման անհրաժեշտության տեսանկյունից: Նա այդ հարցերին անդրադարձել է «Հռոմի պապերի հոգևոր և մարմնավոր իշխանությունը» վերնագրով հոդվածների շարքում: Նրա տեսանկյունից՝ պապի աշխարհիկ իշխանությունը լուրջ խոչընդոտ է իտալական պետությունների քաղաքական մասնատվածությունը վերացնելու համար, և իտալացիների՝ միասնական թագավորություն ունենալու դարավոր երազանքը իրականություն կդառնա միայն այն ժամանակ, երբ Հռոմի պապը հրաժարվի իր աշխարհիկ իշխանությունից, Հռոմը միանա 1861 թ. հռչակված Իտալական թագավորությանը և դառնա միացյալ Իտալիայի մայրաքաղաք:

XIX դարի երկրորդ կեսի իտալական ազգային-ազատագրական պայքարը լայն արձագանք գտավ ժամանակի հայ պարբերական մամուլում, այդ թվում՝ «Մասյաց աղավնի» ամսագրում: Գաբրիել վարդապետ Այվազովսկու (1812-1880) խմբագրությամբ Թեոդոսիայում լույս տեսած ամսագիրը մեծ հետաքրքրություն է դրսևորել աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների նկատմամբ, որոնք լուսաբանել է հիմնականում «Քաղաքական տեսություն» խորագրի տակ, եվրոպական մամուլի հրապարակումների, ստացված պաշտոնական և հեռագրական լուրերի հիման վրա: Գ. Այվազովսկին իտալական խնդրին քաջատեղյակ էր դեռևս Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ եղած տարիներին, երբ խմբագրում էր միաբանության «Բազմավեպ» հանդեսը: Նա իտալական ազատագրական պայքարին, որպես այդ իրադարձությունների անմիջական ականատես, անդրադարձել է 1848 թ. և «Բազմավեպ»-ում իր ստորագրությամբ տպագրել «Վենետիկ քաղաքին նոր ազատությունը» հոդվածը[1]: Այդ հրապարակման մեջ Գ. Այվազովսկին անթաքույց համակրանքով պատմում է վենետիկցիների ազատագրական պայքարի մասին և ափսոսանք հայտնում, որ նրանց ազատությունը կարճ տևեց, ու իտալացիները կրկին հայտնվեցին ավստրիական տիրապետության տակ:

Իտալական ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ համակրանքը Գ. Այվազովսկին պահպանեց նաև «Մասյաց աղավնի» ամսագրի բազմաթիվ հրապարակումներում, որոնք բավական հավաստի և արժանահավատ են: «Մասյաց աղավնի»-ն հանգամանորեն անդրադառնում է 1859 թ. ապրիլին սկսված իտալական ազատագրական երկրորդ պատերազմի ամբողջ ընթացքին՝ ընդհուպ մինչև ամսագրի փակվելը: «Մասյաց աղավնու»

* Հոդվածը ներկայացվել է 06.04.2021 թ., գրախոսվել՝ 09.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 134-141:*

խմբագիրը գտնում է, որ Իտալիայի քաղաքական մասնատվածությունը վերացնելու և երկիրը միավորելու «ազգային գործը չկրնար յաջողութիւն գտնել առանց մեծամեծ դժվարութիւններ յաղթելու, առանց զանազան փորձանքներէ անցնելու»[1]: Նրա կարծիքով՝ իտալացիները պատրաստ են հաղթահարել բազում դժվարություններ, անցնել մարդու կամքից անկախ ծագած փորձությունների միջով, որպեսզի իրենց դարավոր փափագը իրականություն դառնա: Իտալացիների ազգային գործի հաջողության նկատմամբ հավատը երբեք չկորցրած Գ. Այվազովսկին իտալական պայքարի ամբողջ ընթացքում բազմիցս համոզմունք է հայտնում, որ իտալական պետությունները վաղ թե ուշ անպայման միավորվելու են Պիեմոնտի շուրջ և ստեղծելու են միասնական իտալական թագավորություն:

1861 թ. Պիեմոնտի թագավորությանը Լոմբարդիայի և իտալական դքսությունների միավորումից հետո «Մասյաց աղավնի»-ն իրավացիորեն նկատում է, որ դա իտալական խնդրի վերջնական լուծումը չէ: Ամսագրի կարծիքով՝ իտալացիներն իրենց մասնատված հայրենիքը կարող են միավորվել և «մեկ ամբողջ մարմին կազմել» միայն այն դեպքում, երբ Վենետիկն ու Հռոմը միանան 1861 թ. հռչակված իտալական նոր թագավորությանը: «Մասյաց աղավնու» իրատեսական գնահատականով՝ Իտալիայի միավորմանը խոչընդոտում է ոչ միայն Ավստրիան, որը չի ցանկանում զիջել Վենետիկը, այլ նաև Հռոմի Պիուս IX պապը[2], ով չի հրաժարվում իր աշխարհիկ իշխանությունից, որպեսզի Հռոմը դառնա միավորված Իտալիայի մայրաքաղաքը:

1846 թ. հունիսի 16-ին պապ ընտրված Պիուս IX-ը «անբասիր հոգևորականի, սառնասիրտ քաղաքական գործչի և նախապաշարումներից ազատ մարդու համբավ էր վայելում»[3]: Մինչ Պիուս IX պապի գահին անցնելը Պապական պետությունում նկատելի էր վերահաս «հրաբխի անխուսափելի ժայթքում, որը հնարավոր չէր կանխել և որը սպառնում էր սրբել պապի ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ իշխանությունը»[4]:

Պիուս IX-ի անվան հետ է կապվում իտալական պետություններում լիբերալ շարժման սկզբնավորումը: Լիբերալ համարվող պապի անցկացրած բարեփոխումները Ռիսորջիմենտոյի կողմնակիցների շրջանում հույսեր արթնացրին, որ նա կարող է գլխավորել Իտալիայի միավորման համար ծավալված շարժումը: Իտալիայում նրա անունը դարձավ դրոշ նրանց համար, ովքեր հրապուրված էին Վինչենցո Ջոբերտիի[5] նեոգվելֆիզմով[6]: Իտալական բուրժուազիայի աջ թևի շահերն արտահայտող պահպանողական շրջանները ցանկանում էին

---

[1] *«Մասյաց աղավնի», 1861, 1 փետրվարի, թիվ Գ, էջ 35:*

[2] *Պիուս IX (աշխարհիկ անունը՝ Ջովաննի Մարիա Մաստաի դե Ֆերրետտի, 1792-1878), Հռոմի 255-րդ պապը: Ծնվել է կոմս դե Ֆերրետտի ընտանիքում, ստացել փայլուն կրթություն, 1827 թ. ձեռնադրվել է արքեպիսկոպոս, 1839 թ.՝ կարդինալ: 1846 թ. ընտրվելով Հռոմի պապ՝ Պապական պետությունում անցկացրել է մի շարք բարեփոխումներ. հռչակել սահմանադրություն, համաներում շնորհել 13 հազար քաղբանտարկյալների, ապատ արձակել ժողովրդին հնազանդեցնելու նպատակով կազմավորված շվեյցարական գվարդիան, մեղմացրել գրաքննությունը, սահմանել մամուլի հարաբերական ազատություն, ստեղծել աշխարհիկ մարդկանցից կազմված պետական խորհուրդ: Տե՛ս Католическая энциклопедия, т. 3, М., 2007, с. 1506-1510; Большая советская энциклопедия, т. 19, М., 1975, с. 1560.*

[3] *История Италии. Под ред. Лависса и Рамбо. Пер. с. фр., т. 5, М., 1938, с. 43.*

[4] *Орсини Ф. Воспоминания, М.-Л., 1934, с. 95.*

[5] *Վինչենցո Ջոբերտի (1801-1852), իտալացի փիլիսոփա, պետական և քաղաքական գործիչ, հրապարակախոս և հոգևորական: 1825 թ. Թուրինի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր, 1847 թ.՝ Պիեմոնտի խորհրդարանի պատգամավոր, 1848 թ.՝ Պիեմոնտի կառավարության ղեկավար: Իտալիայի ազատության և միավորման ծրագրի հեղինակ: Տե՛ս Эрн В. Жизнь и личность. Джоберти.- «Русская мысль», 1916, Кн. IV, с. 35-60.*

[6] *Նեոգվելֆիզմ՝ XIX դարի առաջին կեսի պահպանողական քաղաքական հոսանք Իտալիայում: Արտահայտում էր իտալական բուրժուազիայի աջ թևի շահերը, ձգտում էր միավորել իտալական պետությունները Հռոմի պապի գերագույն ղեկավարությամբ: Նեոգվելֆիզմը միաժամանակ Ռիսորջիմենտոյի դարաշրջանի լիբերալ կաթոլիցիզմն է, որի կայացման և զարգացման գործում մեծ դեր է խաղացել Վինչենցո Ջոբերտին: Տե՛ս Канделоро Дж. Католическое движение в Италии. Пер. с ит., М., 1955; Невлер В. К. К истории воссоединения Италии, М., 1936.*

Պիուս IX-ի գլխավորությամբ միավորել իտալական պետությունները և ստեղծել համադաշնություն:

Իտալական հասարկության լայն խավերի շրջանում Պիուս IX-ի՝ Իտալիայի ազատարար դառնալու գաղափարն այնքան շատ էր տարածված, որ նրան 1847 թ. աշնանը ավստրիական տիրապետության դեմ ազատագրական պայքար գլխավորելու առաջարկ արեցին հանրապետական, դեմոկրատական հոսանքի գաղափարախոս և ղեկավար Ջուզեպպե Մացցինին (1805-1872) ու Ջուզեպպե Գարիբալդին (1807-1882)[1]: Պիուս IX-ն այդ առաջարկն անվանեց խենթություն և հրաժարվեց գլխավորել ազգային շարժումը՝ պատճառաբանելով՝ «Ինձնից ցանկանում են ինչ-որ Նապոլեոն ստեղծել, այն դեպքում, երբ ես միայն աղքատ գյուղական քահանա եմ»[2]: Հայրենասերի և լիբերալի համբավ ձեռք բերած Պիուս IX-ը ճիշտ էր գնահատում իր դերը: Նրա լիբերալ բարեփոխումները ոչ այնքան իր մտքի կամ բարի կամքի դրսևորումն էին, այլ ամենից առաջ իտալական ազգային և հայրենասիրական ուժերի ակտիվ պայքարի ու պահանջի արդյունքը: Այս իմաստով Պիուս IX-ի անունը իտալական հանրապետական շարժման առաջնորդներից Կարլո Կատանեոյի (1801-1869) բնութագրմամբ՝ «հանկարծակի ծագեց ու արագորեն անհետացավ որպես ազգային միահամուռության խորհրդանիշ: Պիուս IX-ը առասպել էր, մտացածին, որպեսզի ժողովրդին ստիպեր հավատալ ինչ-որ ճշմարտության»[3]:

1848 թ. իտալական ազատագրական պայքարի օրերին Պիուս IX-ը, չհանդուրժելով Պապական պետությունում ծավալված հայրենասիրական ուժերի պահանջը, նոյեմբերի 24-ին գաղտնիորեն լքեց Հռոմը և ապաստան գտավ Նեապոլիտանական թագավորության Գաետա ամրոցում: 1848 թ. փետրվարի 8-ին Հռոմի Սահմանադիր ժողովը Պիուս IX-ին զրկեց աշխարհիկ իշխանությունից և Հռոմը հռչակեց հանրապետություն: Փետրվարի 18-ին Պիուս IX-ը հուշագիր հղեց Ֆրանսիայի, Ավստրիայի, Իսպանիայի և Նեապոլիտանական թագավորության միապետներին՝ խնդրելով օգնել վերականգնելու իր աշխարհիկ իշխանությունը[4]: Հռոմի Հանրապետության անկումից հետո 1850 թ. ապրիլին Պապական պետություն վերադարձած Պիուս IX-ի գլխավորած Կաթոլիկ եկեղեցու և Պիեմոնտի երիտասարդ թագավոր Վիտորիո Էմմանուել II-ի (1820-1878) կառավարության միջև պայքար ծավալվեց: Այն գնալով խորացավ, քաղաքական բնույթ ձեռք բերեց, ուստի իտալացիներն իրենց ազատության հույսը սկսեցին կապել Պիեմոնտի արիասիրտ, առողջ բանականության տեր և խորաթափանց թագավորի հետ:

1858-1860 թթ. ծագող իտալական միացյալ պետությունների և պապականության միջև ուղղակի հակամարտությունը, որ ծագել էր Պիուս IX-ին աշխարհիկ իշխանությունից զրկելու կապակցությամբ, սկիզբ դրեց տևական պայքարի, որը բացահայտեց լիբերալ կաթոլիցիզմի անկումը: 1860 թ. հոկտեմբերի 11-ին Պիեմոնտի վարչապետ կոմս Կամիլո Կավուրը (1810-1861) պատգամավորների պալատում հայտարարեց, որ «Հռոմի հարցով» անհրաժեշտ է անհապաղ բանակցություններ վարել Պիուս IX-ի հետ: Նրա ծրագրի համաձայն՝ պապն իր աշխարհիկ իշխանությունը պետք է զիջեր նոր կազմավորված միացյալ իտալական պետությանը: Դրա փոխարեն իտալական պետությունը հանդիսանալու էր պապի լիակատար անկախության երաշխավորը Կաթոլիկ եկեղեցու քահանայապետի լիազորությունների իրականացման գործում: Կ. Կավուրը «Ազատ եկեղեցի՝ ազատ պետությունում» գաղափարը Պիուս IX պապին հասանելի դարձնելու և նրա հետ այդ հարցով բանակցություններ վարելու գործը հանձնարարեց իր գործակալներին՝ Հռոմի Հանրապետության նախկին պատգամավոր, բժիշկ Դիոմեդե Պանտալեոնիին (1810-1885) և Հռոմի համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր, հայտնի աստվածաբան, Պիուս IX-ի երբեմնի գլխավոր

---

[1] *Sti՛u Ковальская М. И. Италия в борьбе за национальную независимость и единство. М., 1961, с. 246; Лурье А. Гарибальди. М., 1957, с. 72.*

[2] *История IX века, Т. 5, с. 44.*

[3] *Канделоро Дж. Католическое движение в Италии, Пер. с ит. , М., 1956, с. 87.*

[4] *История Италии, под пед. К. Ф. Мизиано, Т. 2, М., 1970, с. 198.*

խորհրդականներից Կարլո Պասսալիային (1812-1887): Դ. Պանտալեոնին 1860 թ. դեկտեմբերի 14-ին պապական կարդինալ Սանտուչիին հանձնեց Պիուս IX-ին հղված «Հռչակագիր», որը պապին առաջարկում էր Հռոմի հարցում բանակցություններ վարել: 1861 թ. մարտի 16-ին Պապական պետության պետական քարտուղար կարդինալ Ջակոմո Անտոնելլին (1806-1876) մերժեց այդ հարցով Պիեմոնտի հետ բանակցություններ սկսելը[1]:

Հռոմի պապի աշխարհիկ իշխանության հարցը իտալական ազատագրական երկրորդ պատերազմի ընթացքում լայն արձագանք գտավ ժամանակի եվրոպական մամուլում: Այդ պայքարի ընթացքին և մանրամասներին եվրոպական մամուլի բազմաթիվ հրապարակումներից տեղեկացված «Մասյաց աղավնի»-ն Իտալիայի միավորմանը խոչընդոտող մի շարք կնճռոտ հարցերից մեկը իրավամբ համարում է Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու հարցը: Վերլուծելով եվրոպական, հատկապես՝ իտալական մամուլի բազմաբնույթ հրապարակումները, Գ. Այվազովսկին նկատում է. «Իտալական խնդիրը այս միջոցիս եւրոպական քաղաքականութեան բոլոր ուրիշ խնդիրները գրեթե մոռացուց»[2]: Նրա կարծիքով՝ դա պայմանավորված է նրանով, որ եվրոպական առաջատար պետությունները ոչ միայն իտալական խնդրի լուծումը պետք է գտնեն, այլև հարկադրված են արձագանքելու Հռոմի Պիուս IX պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու պահանջին: Ըստ «Մասյաց աղավնու»՝ Հռոմի պապի աշխարհիկ իշխանության մասին դատողությունները նորություն չեն: Դեռևս 1848 թ. «պապի ընտրած և փառաւորած» կառավարության ղեկավար Պ. Ռոսսին[3] հայտարարել էր. «Պապին աշխարհիկ իշխանութիւնը պէտք է կամ բոլորովին կերպարանափոխ լինի, և կամ բոլորովին կորսուի»[4]: Պ. Ռոսսին հմուտ վարչարար և լրջախոհ քաղաքական գործիչ էր, ով Պապական պետության քաղաքացիական կառավարումը վերակառուցվեց, արմատախիլ արեց աղաղակող չարաշահումները և բարելավեց ֆինանսները՝ հոգևորականությունից 4 մլն էքյու փոխառություն ձեռք բերելու ճանապարհով[5]: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ Պ. Ռոսսի հայտարարությունից 12 տարի անց պապի աշխարհիկ իշխանության հարցը, կապված իտալական խնդրի վերաբացման հետ, կրկին դարձել է քննարկման առարկա: Այդժամ եվրոպական քաղաքական շրջաններում և մամուլում, գրում է ամսագիրը, իտալական խնդրի պատճառով Հռոմի պապի «ժամանակավոր իշխանության» մասին լուրջ վեճեր են գնում: Պապականության կողմնակիցները նրա աշխարհիկ իշխանությունը համարում են օրինական, իսկ հակառակորդները պնդում են, որ նա պետք է հրաժարվի այդ իշխանությունից: Բանավիճող կողմերը չափազանց անհանդուրժող են միմյանց նկատմամբ և իրենց տեսակետը հիմնավորելու նպատակով հրապարակել են մեծ քանակությամբ հոդվածներ, գրքեր և բրոշյուրներ:

«Մասյաց աղավնի»-ն ճիշտ էր տեղեկացված: Այդ բրոշյուրներից մեկը Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի հրամանով լույս տեսավ 1859 թ. դեկտեմբերին՝ «Պապը և առաջադիմությունը» վերնագրով: Բրոշյուրի հեղինակը Նապոլեոն III-ի մտերիմներից Արթուր դե լա

---

[1] *Տե՛ս Дембидур А. Дипломатическая история Европы 1815-1878, т. 2, Ростов-на-Дону, 1995, с. 201; Канделоро Дж. История современной Италии, Пер. с ит., т. 5, М., 1971, с. 99-105.*

[2] *«Մասյաց աղավնի», Թեոդոսիա, 1860, հունվար, թիվ Ա, էջ 16:*

[3] *Պելլեգրինո Ռոսսի (1787-1848), տնտեսագետ, իրավաբան, քաղաքական գործիչ: Տարբեր տարիների գործունեություն է ծավալել Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Պապական պետությունում: 1845-1848 թթ. եղել է Ֆրանսիայի դեսպանը Պապական պետությունում: 1848 թ. սեպտեմբեր-նոյեմբերին եղել է Պապական պետության ներքին գործերի, ոստիկանության նախարար: Վարել է չափավոր լիբերալ քաղաքականություն՝ փորձելով Պիուս IX-ի իշխանությանը տալ աշխարհիկ բնույթ: Պ. Ռոսսին դեմ էր Սահմանադիր ժողով հրավիրելու գաղափարին, նպատակ էր հետապնդում ստեղծել իտալական դաշնություն՝ միապետերի համաձայնության ճանապարհով, փորձում էր Հռոմի պապին հետ պահել Ավստրիային պատերազմ հայտարարելու մտադրությունից: 1848 թ. նոյեմբերի 15-ին Հռոմում սպանվել է հայրենասիրական ուժերի կողմից: Տե՛ս Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, СПБ. 1899, т. XXVII, с. 114-115; История Италии, т. 2, с. 179-180; История XIX века, т. 5, с. 64; Дебидур А. Указ. соч., т. 2, с. 21-22.*

[4] *«Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 264:*

[5] *Տե՛ս История XIX века, т. 5, с. 64-65.*

Գերոնիներն էր: Նա Հռոմի պապին առաջարկում էր հրաժարվել աշխարհիկ իշխանությունից՝ հանուն Իտալիայում կարգ ու կանոն հաստատելու: Բրոշյուրի բովանդակությունից վրդովված Պիուս IX-ը 1860 թ. հունվարի 8-ին պապական կոնդակ արձակեց, որտեղ կտրուկ մերժում էր այդ խորհուրդը: Նա Ֆրանսիայի կայսեր սադրանքով հրատարակված բրոշյուրն անվանում էր «կեղծավորության և միահյուսված անամոթ հակասությունների բացառիկ հուշարձան»[1]:

«Մասյաց աղավնու» խմբագրի կարծիքով՝ այս բանավեճում ճշմարտությունը նրանց կողմն է, ովքեր ուղիղ են հասկանում սուրբ Ավետարանի այն խոսքերը, որ ասել է մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ»: Սա պետք է հասկանալ հետևյալ իմաստով՝ Քրիստոսը աշխարհ չէր եկել, որ «մարմնաւոր և արտաքին թագաւորութիւն բանեցէ, ուստի և իրեն փոխանորդ եկեղեցականները մարմնաւոր իշխանութեան ետևէ չեն կրնար իյնալ՝ առանց իրենց վիճակն ու պարտքերը մոռանալու»[2]: Իր ընթերցողներին վիճահարույց խնդրին ծանոթացնելու նպատակով «Մասյաց աղավնի»-ն հետագա մի քանի համարներում անդրադառնում է Հռոմի պապի հոգևոր և աշխարհիկ իշխանությանը: Ամսագիրն իտալական խնդիրը կրոնական չլինելու կապակցությամբ վկայակոչում է 1860 թ. մարտի 10-ին Ֆրանսիայի Սենատում «քաջ և մեծանուն իրավագետ» Անդրե Դյուպենի[3] ճառը: Նա ընդգծում էր, որ իտալական «խնդիրը հավատոյ խնդիր չէ, ուստի ամէն մարդ կարող է համարձակ խօսիլ վրան՝ առանց վախենալու, որ պապին և պապականներուն առջևը հերետիկոս կամ հերձուածող պիտի երևնայ»[4]: Ըստ «հանճարեղ ատենախոս» Ա. Դյուպենի՝ Ֆրանսիան չպետք է ուշադրություն դարձնի պապականների բողոքներին, ովքեր պահանջում են, որ Հռոմում գտնվող ֆրանսիական զորքը «իտալացիները պապին ծանր լուծին տակը նուաճե»[5]:

Ա. Դյուպենի ճառը դարձավ որոշակի ուղենիշ, որով «Մասյաց աղավնի»-ն բազմիցս հանդես եկավ Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու, ֆրանսիական զորքերը Հռոմից դուրս բերելու, Հռոմը՝ Պիեմոնտի, ապա Իտալական թագավորությունը միավորելու և Իտալիայի մայրաքաղաք հռչակելու օգտին: Հռոմի պապերի աշխարհիկ իշխանության վերացման անհրաժեշտությունը «Մասյաց աղավնի»-ն իր հրապարակումներում հիմնավորում է կրոնական և քաղաքական տեսանկյունից: Ամսագիրը «Հռոմի պապերի հոգևոր և մարմնավոր իշխանությունը» հոդվածում գրում է, որ իտալական խնդրի «մեծ դժուարութիւնը պապին իշխանութեանը իւր հպատակներուն վրայէն պակսելուն համար է»[6]: Եվրոպական պետությունները և քաղաքագետները հասկանում են այն իտալացիներին, ովքեր «չեն ուզեր այլևս պապին իշխանութեանը տակը մնալ», քանզի բոլորին հասկանալի է պապական կառավարության մեծամեծ պակասությունները և «պապին Իտալիոյ ժողովրդոց վրայ ունեցած իշխանութեան խախուտ լինելը»[7]: Գ. Այվազովսկու տեղեկություններով՝ պապը և իր կարդինալները ջանքեր են գործադրում, ամեն տեսակ հոգևոր և աշխարհիկ ճնշումներ են իրականացնում, որպեսզի «իրենց հպատակները նուաճեալ պահեն իրենց լուծին տակը»: Իսկ պապականները՝ այսինքն կաթոլիկ ժողովրդի «միամիտներն ու տգետները մեծ շփոթութեան մեջ են»: Նրանք կարծում են, որ «պապին ժամանակաւոր իշխանութեանը

---

[1] *Дебидур А. Указ. соч., т. 2, с. 178; История XIX века, т. 5, с.160, 278.*

[2] *«Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ Դ, էջ 69:*

[3] *Անդրե Դյուպեն (1783-1865), ֆրանսիական պետական գործիչ, իրավաբան, ֆրանսիական ակադեմիայի անդամ: 1832-1840 թթ. եղել է Պատգամավորների պալատի նախագահ, հետագայում՝ Սահմանադիր ժողովի անդամ, Վճռաբեկ դատարանի գլխավոր դատախազ: Տե՛ս Энциклопедический словарь Брокгауза и Ефрона, СПБ. 1894, т. 11 с. 386.*

[4] *«Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ Դ, էջ 69:*

[5] *Նույն տեղում:*

[6] *«Մասյաց աղավնի», 1860, մայիս, թիվ Ե, էջ 75:*

[7] *Նույն տեղում:*

դպչիլը՝ նորա հոգևոր իշխանութեանն ալ մեծ վնաս ընել է»[1]: Իսկ ի՞նչ պիտի ասեն «այն խեղճերը», շարունակում է Գ. Այվազովսկին, երբ հասկանան, որ «պապին հոգևոր իշխանությունն անգամ անհիմն և խախուտ է... ամենևին իշխանութիւն կամ մեծութիւն չունի նա Քրիստոսի ընդհանրական Եկեղեցւոյն վրայ»[2]:

Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը իտալացիների համար լուծ համարող «Մասյաց աղավնի»-ն «օգտակար և հաճոյական ծառայութիւն» է համարում ամսագրի ընթերցողներին պարզ և մատչելի պարզաբանել խնդրի էությունը և ցույց տալ, թե իրավունքն ում կողմն է՝ Հռոմի պապի՞ և պապականների՞, թե՞ «անոնց կառավարութենէն ազատիլ ուզող խեղճ ժողովրդոց»[3]: Օրինավոր պետության հպատակ լինելը, գրում է ամսագիրը, ցանկացած մարդու պարտքն է, բայց ապօրինի տիրոջ հպատակությունից դուրս գալու յուրաքանչյուր մարդու ցանկությունը նրա իրավունքն է, «երբ որ բարեկիրթ տէրութեանց եւ ժողովրդոց հասարակաց կարծեօք հաստատուի այն իրաւունքը»[4]: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ պապական իշխանության պահպանման կողմնակիցները ջանքեր են գործադրում հիմնավորելու, որ Հռոմի պապի «մարմանւոր իշխանությունը օրինաւոր է»: Սա հիմնավորելու համար նրանք «սխալ սխալի վրայ կավելցընեն» և պնդում են, թե պապի աշխարհիկ իշխանությունը «հոգևորին հետ կապուած է, անկէց չբաժանուիր»: Ելնելով այս մտայնությունից՝ նրանք ասում են, որ ովքեր պապի աշխարհիկ իշխանությունը ցանկանում են թուլացնել, դրանով նաև «նորա հոգևոր իշխանութենէն ալ գլուխ քաղած կլինի»[5]: Հետևաբար, եզրակացնում է «Մասյաց աղավնի»-ն, եթե պապականները ուզում են հասկանալ, որ «պապը իրենց կարծած հոգեւոր իշխանութիւնն ալ չունի, եւ թէ ապօրինաւոր կերպով կանուանէ ինքնզինքը Գլուխ եկեղեցւոյ», ապա նրան աշխարհիկ իշխանությունից «զրկուելուն վրայ ամենեւին պիտի չզարմանան ու պիտի չցաւին»[6]:

Պապականների գլխավոր սխալն ամենից առաջ այն է, շարունակում է «Մասյաց աղավնի»-ն, որ պապի «հոգևոր իշխանութեանը վրայ ծուռ եւ չափազանց կարծիքներ ունին»: Նրանք մտածում են, որ «պապը քահանայնութիւն և թագավորութիւն ունի», նրա աշխարհիկ իշխանությունը օրինավոր է, պապը Քրիստոսի փոխանորդն է այս աշխարհի վրա և եկեղեցու գերագույն գլուխն է[7]:

Եվրոպայում տեղի ունեցող իրադարձություններին քաջատեղյակ «Մասյաց աղավնի»-ն գրում է, որ «այս ծուռ սկզբունքները» շարադրված են 1860 թ. սկզբին, Ֆրանսիայում լույս տեսած «Պապը և դեսպանաժողովը» բրոշյուրում, որտեղ բազմաթիվ հակասական մտքեր կան: Մասնավորապես, մի տեղ խոսք է գնում, որ ժամանակավոր իշխանություն ունենալը հարկավոր է պապին, մեկ այլ տեղ նշվում է, որ այդ իշխանությունը պապին ամենևին վայել չէ, «մեծապես ալ վնասակար է իրեն հոգևոր իշխանութեանը»: Մի տեղ քննադատվում է պապի աշխարհիկ իշխանությունը և վերհանվում նրա կառավարության խոցելի կողմերը, մեկ այլ տեղ խորհուրդ է տրվում, որ Հռոմի «պապին մարմնաւոր իշխանութեանը հնազանդի ու հանդարտ կենայ»[8]: Ըստ «Մասյաց աղավնու» խմբագրի՝ այս բրոշյուրի կապակցությամբ Եվրոպայում կարծիքները բաժանվել են: Պապն ու պապականները բրոշյուրն անիծել, նզովել և մերժել են, որովհետև այնտեղ գրված է, որ Հռոմը պապի համար բավական է, և նա պետք է հրաժարվի Ռոմանիա նահանգից: Արդարություն սիրող մարդիկ

[1] Նույն տեղում, էջ 76:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:
[8] Նույն տեղում:

քննադատել և պախարակել են բրոշյուրը, որովհետև «պապին իշխանութիւնը առաջ չափազանց կըբարձրացընէր և յետոյ կուզէր որ Ռոմանիան առնուի ձեռքէն ու Հռովմը միայն գերի մնայ պապին»[1]:

Անդրադառնալով այդ հարցում իր դիրքորոշմանը՝ Գ. Այվազովսկին գրում է. «Յայտնի բան է թէ մենք ալ այս վերջիններուն կարգէն եմք»[2]: Հստակ ցույց տալով, որ համամիտ է այն մարդկանց հետ, ովքեր կողմնակից են Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից զրկելուն, «Մասյաց աղավնի»-ն իր դիրքորոշումն ամսագրի ընթերցողներին ավելի մատչելի դարձնելու համար ընդհանուր տեղեկություններ է տալիս պապական իշխանության մասին: Եվրոպական և արևելյան 12 լեզուներ իմացող Գ. Այվազովսկին պարզաբանում է, որ պապ բառը մի քանի լեզուներով նշանակում է հայր: «Այս սիրոյ և մեծարանած անունը» առաջին քրիստոնյա հույները տվեցին իրենց եպիսկոպոսներին ու առաջնորդներին: Իններորդ դարում սովորություն դարձավ պապ անունը տալ Ալեքսանդրիայի, Հռոմի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքներին:

Կաթոլիկ եկեղեցու պատմության լավագույն գիտակ Գ. վարդապետ Այվազովսկին պատմում է, որ IX դարում պապերը «աշխարհական իշխանութիւն առան»[3], իսկ 1073 թ. Գրիգորիուս VII պապը եկեղեցական ժողովում սեփականեց պապ պատվանունը և ուժեղացրեց իր իշխանությունը: Պապն իր «հոգևոր և մարմնավոր ճոխությունները մեկտեղ խառնելով» հրամայում էր անգամ թագավորներին և իշխում նրա հպատակների վրա: Հավաստի ներկայացնելով Գրիգորիուս VII պապի[4] գործունեությունը՝ Գ. Այվազովսկին այնուհետև գրում է, որ Հռոմի պապերը հետագայում «հափշտակեցին գերագոյն քահանայապետ, գլուխ եկեղեցւոյ Քրիստոսի, փոխանորդ Քրիստոսի պատուանունները» և այսպիսի «բացարձակ և ամբարտաւան խոշոր ածականներ»[5]: Եթե մենք պապականներին լսենք, շարունակում է Գ. Այվազովսկին, ապա նրանց համոզմամբ պապերի իշխանությունը աստվածային է, տրված ի վերուստ «ընհանրական եկեղեցւոյն Քրիստոսի, ուստի և անսահման իշխանութիւն է՝ Աստուծոյ իշխանութեանը նման, և ոչ միայն հոգևոր իշխանութիւն է՝ այլև մարմնաւոր»[6]: Պապականների այս համոզմունքը Գ. Այվազովսկին հերքում է՝ խնդիրը դիտարկելով «սուրբ Աւետարանին մէջ և Եկեղեցական պատմութեանց մէջ»: Նա նշում է, որ կաթոլիկ և ոչ միայն կաթոլիկ շատ աստվածաբաններ ու գիտուն մարդիկ հայտարարում են, թե պապերը հանիրաւի այնքան մեծութիւն և իշխանութիւն կծախեն»: Ավետարանը «ամենայն կրօնական ճշմարտութեանց լուսաւոր աղբիւր» ճանաչող Գ. Այվազովսկին գրում է, որ Հռոմի պապերի հոգևոր և աշխարհիկ իշխանության մասին ճշմարտությունը «ամենապարզ կերպով հաստատուած» է Ավետարանում: Նա Ավետարանից չորս փաստարկ է վկայակոչում, ըստ որի՝ պապերը չեն կարող ունենալ աշխարհիկ իշխանություն: Առաջին, Քրիստոսը երկրի վրա մասնավոր փոխանորդ կամ հաջորդ չունի և ինքը պիտի թագավորի մինչև դատաստանի օրը: Երկրորդ, միայն Քրիստոսն է իր եկեղեցու հիմքը, գլուխը, քահանայապետը, հովվապետը, տերն ու վարդապետը: Երրորդ, Առաքյալներից յուրաքանչյուրը հավասար էր մյուսներին, նրանցից որևէ մեկը մյուսների նկատմամբ իշխանություն չուներ: Ուստի եպիսկոպոսները, որպես Առաքյալների հաջորդ, նույնպես հավասար են, և Աստված նրանցից մեկին չի կարգել ընդհանուր եկեղեցու գլուխ: Չորրորդ, Առաքյալները հրաման չունեին աշխարհական իշխանության կամ ժամանակավոր տերություն բանեցնելու, «ուրեմն իրենց հաջորդներն էլ հոգևոր իշխանութիւն միայն պետի ունենան և ոչ մարմնաւոր»[7]: Ան-

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

[3] *«Մասյաց աղավնի», 1860, սեպտեմբեր, թիվ Թ, էջ 144:*

[4] *Տե՛ս Вязигин А. С. Григорий VII. Его жизнь и общественная деятельность. Биографический очерк, СПб, 1891.*

[5] *«Մասյաց աղավնի», 1860, մայիս, թիվ Ե, էջ 77:*

[6] *Նույն տեղում:*

[7] *Նույն տեղում:*

տեսելով այս հանրահայտ ճշմարտությունները, շարունակում է Գ. Այվազովսկին, ներկայումս իտալական խնդրի առաջ գալու կապակցությամբ ստեղծվել է անհասկանալի վիճակ: Նա «Հռոմի պապերի աշխարհիկ իշխանությունը» հոդվածում գրում է, որ եթե որևէ մեկը համարձակվի ասել, թե Հռոմի պապը զուրկ է աշխարհիկ իշխանությունից, ապա անմիջապես պապականների կողմից «իբրև մոլորեալ և հերետիկոս կդատապարտուի անոնցմէ»[1]: Պիուս IX պապն այս հարցում այնքան հեռու է գնացել, որ նզովել է բոլոր նրանց, ովքեր իտալական պետությունների միավորման կապակցությամբ ցանկանում էին նրա աշխարհիկ իշխանությունը վերացնել կամ պակասացնել:

Բացահայտ հակադրվելով Հռոմի պապի իշխանության կողմնակիցներին՝ Գ. Այվազովսկին հռետորական հարցադրում է անում՝ «որտե՞ղ է գրուած, որ պապերը պէտք է աշխարհական իշխանութիւն ունենան»[2]: Ըստ պապականների՝ եթե Հռոմի պապը Պետրոս առաքյալի հաջորդն է, շարունակում է դատողություններ անել Գ. Այվազովսկին, ապա Պետրոս առաքյալն աշխարհիկ իշխանություն չուներ: Ավելին, մեր տեր Քրիստոսը երբևէ աշխարհիկ իշխանությունից չի օգտվել: Նա իր եղբայրներին ասել է, որ եթե նրանցից որևէ մեկը ցանկանում է «մեծ լինել, թող ամենուն ծառան լինի, և ով որ ուզէ առաջին լինել, ամենէն յետինն լինի»[3]: «Մասյաց աղավնի»-ն Հովհաննեսի, Մատթեոսի, Ղուկասի Ավետարաններից բերում է մի շարք օրինակներ, երբ Քրիստոսը հրաժարվել է թագավոր դառնալու, մարդկանց դատավոր լինելու և առհասարակ աշխարհիկ իշխանություն օգտագործելու առաջարկներից: Նա մարդկանց բացատրել է, որ ինքն աշխարհ չի եկել, որ դատաստաններ տեսնի, այլ եկել է աշխարհը փրկելու: Քրիստոսը Պիղատոսին ասել է, որ եթե իր թագավորությունն այս աշխարհում լիներ, ապա իր համար պատերազմող մարդիկ կունենար, և որ իր թագավորությունն այս աշխարհից չէ: Քրիստոսն առաքյալներին էլ թագավորական կամ դատավորական իշխանություն չտվեց: Հետևաբար, եզրակացնում է Գ. Այվազովսկին, եթե Քրիստոսն ամենևին աշխարհիկ իշխանություն չուզեց և չկիրառեց, եթե Պետրոս առաքյալն իշխանություն չտվեց ուրիշներին, ապա իրեն Քրիստոսի փոխանորդ և Պետրոս առաքյալի հաջորդ անվանող Հռոմի պապը «ի՞նչ իրաւամբ կուզէ տիրապետել ընդհանուր Եկեղեցւոյ վրայ իբրև բացարձակ տէր եւ իշխան հոգևոր եւ մարմնաւոր»[4]:

Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը հաստատելու համար պապականները վկայակոչում էին Պետրոս առաքյալի ժառանգությունը: Գ. Այվազովսկին հակադրվում է նաև այս փաստարկին՝ հիմնվելով Ղուկասի Ավետարանի վրա, ըստ որի՝ Պետրոս առաքյալը թագավորություն կամ կարողություն չուներ, հետևաբար չունեցածը չէր կարող ժառանգել[5]: Սուրբ Պետրոսի մտքով անգամ չէր կարող անցնել, շարունակում է Գ. Այվազովսկին, որ «իւր անունովը ատենով այսպիսի անիրաւ պահանջմունքներ ու գոռոզութիւններ լինին»[6]: Ըստ «Մասյաց աղավնու» խմբագրի՝ Հռոմի պապերն աշխարհիկ իշխանություն ունենալու գաղափարն իրենց համար դարձրել են սկզբունք: Այս «սկբունքը այնպես հաստատ տպաւորուած է իրենց մտքին ու սրտին մեջ», որ եթե իրենց երկրի մի փոքր մասը, անգամ Հռոմը մնա իրենց ձեռքին, «իրենք այն սկզբունքէն ետ պիտի չկենան, վասնզի մէկ մը որ սկզբունքը անխախատ մնայ, առիթ եկածին պէս դարձեալ իրենց տիրապետական հոգին գլուխ պիտի վերցնէ»[7]: Թող պապականները և մի քանի կրոնամոլ աստվածաբաններ որքան ցանկանում են հպարտանան, շարունակում է ամսագիրը, թե «իրենք այնպիսի գլուխ մը կդավանին եկեղեցւոյ՝ որ միանգամայն քահանայապետ է և թագաւոր»: Այս մարդկանցից բացի՝ կաթո-

[1] «Մասյաց աղավնի», 1860, օգոստոս, թիվ Ը, էջ 129:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 80:
[4] «Մասյաց աղավնի«, 1860, օգոստոս, թիվ Ը, էջ 129:
[5] Նույն տեղում, էջ 130:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, էջ 130-131:

լիկների շրջանում խելացիներն ու փոքրիշատե պատմությունից տեղեկություն ունեցողները լավ են հասկանում, որ «ամեն ժամանակ պապերուն կարծեցեալ իրաւունքերն ու մեծութիւնները դէմ ընդդէմ հակառակ են սուրբ Աւետարանի հոգւոյն ու խօսքերուն»: Ամսագրի համոզմամբ՝ այս մարդիկ գիտեն, որ պապերն իրենք են իրենց համար հնարել ցանազուն ապօրինի ճանապարհով իրենց իրավունքները: Այդ իրավունքների հիմքը «ոչ թե Աւետարանն է, այլ պապերուն փառասիրութիւնն ու աշխարհասիրութիւնը և թէ իրենց մարմնաւոր կամ աշխարհական իշխանութիւնը ամէն ժամանակ հակառակ եղած է հոգևոր իշխանութեան և վնաս ըրեր է անոր»[1]:

«Մասյաց աղավնի»-ն Հռոմի պապերի հոգևոր և աշխարհիկ իշխանության վերաբերյալ իր դատողություններն ընդհանրացնում է՝ կատարելով հետևյալ եզրակացությունը. «եկեղեցաց ողբալի բաժանմանը գլխավոր պատճառ պապերուն գոռոզութիւնն ու աշխարհական իշխանութիւնը եղած է»[2]: Այնպես որ, եկեղեցին միաբան և հուսալի կարող է լինել միայն այն ժամանակ, երբ «պապերը ոչ միայն իրենց ունեցած աշխարհական իշխանութունէն հրաժարին, այլև իրենց հոգևոր իշխանութեան չափը գիտնան, խոնարհին, և քրիստոսական եկեղեցւոյն հին և պատկառելի կանոններէն դուրս չելլեն ամենևին»[3]:

«Մասյաց աղավնի»-ն, ուշադրությամբ հետևելով եվրոպական լրատվությանը, նկատում է, որ Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից հրաժարվելու պահանջ ներկայացնում են եվրոպական քաղաքագետները, հասարակական գործիչները, Պիեմոնտի թագավորությունը, որոշ բարձրաստիճան հոգևորականներ և անգամ կաթոլիկ քահանաներ: Ամսագրի դիտարկմամբ՝ Հռոմի պապին 1859 թ. դեկտեմբերի 31-ին այդպիսի պահանջ բավական հարգալից տոնով ներկայացրել է Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը: Այդ առաջարկից վրդովված Պիուս IX-ը 1860 թ. հունվարի 19-ին հրապարակած կոնդակում, ի լուր համայն աշխարհի, հայտարարեց, որ քաղաքականությունը խառնվել է կրոնի հետ, և իր աշխարհիկ իշխանության հակառակորդներն արժանի են նույնպիսի բանադրանքի, ինչպես իր հոգևոր հեղինակության հակառակորդները[4]: Պիուս IX-ը գնաց այդ քայլին և 1860 թ. մարտի 26-ին բանադրանքի ենթարկեց Պիեմոնտի թագավոր Վիտորիո Էմմանուել II-ին և նրա նախարարներին, ինչը մասնակի վիրավորանք էր նաև Նապոլեոն III-ին: Պապը փորձեց Նապոլեոն III-ի դեմ հրահել ֆրանսիական եպիսկոպոսներին և մերժեց 1860 թ. ապրիլի ֆրանսիական կառավարության առաջարկը: Պապական պետության տարածքային անձեռնմխելիության դիմաց Ֆրանսիայի կայսրը պապին առաջարկում էր վարկեր, որից Պիուս IX-ը հրաժարվեց[5]:

Բացահայտ անհանդուրժող և անզիջում դիրքորոշում ստանձնած Պիուս IX-ը, կորցնելով իրատեսության զգացումը, մոռանում էր, որ անգամ իր կարդինալներից ոմանք էին առաջարկում բացարձակ հակամարտության մեջ չմտնել Պիեմոնտի թագավորության հետ և իր աշխարհիկ իշխանության հարցի շուրջ բանակցություններ վարել: Պապին նման խորհուրդ էին տալիս կարդինալներ Սանտուչչին, Դ' Անդրեան և Ամատը: Մինչդեռ պետական քարտուղարի պաշտոնը 12 տարի զբաղեցնող կարդինալ Ջ. Անտոնելլին, ռազմական նախարար Դե Մերոդեն և ազդեցիկ այլ գործիչներ Պիուս IX-ին հորդորում էին ոչ մի պայմանով իր աշխարհիկ իշխանության հարցում զիջումներ չանել[6]:

1861 թ. մարտի 18-ին կարդինալների ժողովում արտասանած ճառում Հռոմի պապը կտրուկ մերժեց Պիեմոնտի հետ հաշտության գաղափարը: Դատողություններ անելով Պիուս IX-ի ճառի մասին՝ «Մասյաց աղավնի»-ն եզրակացնում է, որ «անոր խօսքերէն ամենևին չերևնար, որ միտք ունենայ իւր կողմանէ հրաժարելու աշխարհական իշխանութենէն»,

---

[1] *Նույն տեղում, էջ 131:*
[2] *«Մասյաց աղավնի», 1860, սեպտեմբեր, թիվ Թ, էջ 147:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Տե՛ս Дебидур А. Дипломатическая история Европы 1815-1878, т. II, Ростов-на-Дону, 1995, с. 178:*
[5] *История XIX века, т. 5, с. 280.*
[6] *Канделоро Дж. История современной Италии, т. 5, с. 100.*

ճիշտ հակառակը, պապի ճառից կարելի է հետևություն անել, որ ով ցանկանա իր իշխանությանը հակադրվել, «մեծ յանդգնութիւն ու մահու չափ մեղք ըրած կլինի»[1]: Հռոմի պապն իր դիրքորոշումը բացատրում էր նրանով, որ ժամանակակից քաղաքակրթությունը ծնում է բազմաթիվ սխալներ, թույլ է տալիս անթիվ չարաշահումներ, պետական պաշտոնները վստահում է անհավատների, թշնամական վերաբերմունք է դրսևորում կրոնական եղբայրությունների նկատմամբ, զրկում է Սուրբ աթոռն իր օրինական տիրույթներից, խանգարում է հոգևորականությանը նրա փրկարար առաքելությունում[2]:

«Մասյաց աղավնի»-ն հակադրվում է Պիուս IX-ի այս փաստարկին՝ ընդգծելով, որ ժամանակակից քաղաքակրթությունը բացահայտ հերքում և մերժում է պապին, քանզի նա «հոովմէական կաթոլիկ դաւանանքին դէմ է» և հայտարարում է, թե «Աշխարհիս երեսը մի միայն ճշմարիտ և սուրբ դաւանանքը կաթոլիկությունն է, և նա միայն կտանի յաւիտենական երջանկութեան»[3]: Ամսագիրն իր կարծիքը հիմնավորելու համար հղում է անում ֆրանսիական «Constitutional» կիսապաշտոնական թերթին, որը Պիուս IX-ի ճառում արտահայտված մտքերը համարում էր վնասակար ոչ միայն ժամանակակից քաղաքակրթության, այլև անձամբ պապի հոգևոր և աշխարհիկ իշխանության համար: Թերթը ցավով արձանագրում է, որ պապը խոհեմություն չի դրսևորում և ցանկություն չի հայտնում Պիեմոնտի թագավորության հետ հաշտվելու, որն ավելի շատ կբարձրացնի նրա, քան թե իտալական կառավարության պատիվը:

Անդրադառնալով Պիուս IX-ի առողջության վատթարացմանը՝ «Մասյաց աղավնի»-ն գրում է, որ, ըստ տարածված լուրերի, եթե նա մահանա, ապա Վիտորիո Էմմանուել II-ը Հռոմում թագավոր կհռչակվի, իսկ պապի հաջորդին կմնա «միայն հաստատել արդէն եղած լմնցած գործը»[4]: Ներկայումս, շարունակում է «Մասյաց աղավնի»-ն, «ամէն մարդ ալ կտեսնէ որ պապին աշխարհական իշխանութեան վերջը հասեր է»: Ըստ ամսագրի՝ այս մասին եվրոպական երկրներում իտալական դեսպաններին ու հյուպատոսներին հղած շրջաբերականում գրել է Կ. Կավուրի մահից հետո վարչապետի պաշտոնը ստանձնած բարոն Բետտինո Ռիկազոլին (1809-1880): «Մասյաց աղավնի»-ն մեջբերում է այդ շրջաբերականից Բ. Ռիկազոլիի այն միտքը, որ «հոգևորական անձինք խելքերնին ու մտքերնին տուեր են սուրբ բաները չարաչար գործածելուց բոլորովին աշխարհական նպատակի համար»: Բ. Ռիկազոլին վստահություն էր հայտնում, որ Հռոմի խնդիրը «անտարակոյս պիտի լուծուի», որպեսզի միաժամանակ «եկեղեցւոյ և Իտալիոյ ազատութիւնն ու պատիւը նորոգուի ու հաստատուի»[5]:

Շարունակելով զարգացնել Պիուս IX-ին աշխարհիկ իշխանությունից զրկելու հարցը՝ «Մասյաց աղավնի»-ն ընթերցողներին տեղեկացնում է, որ եկեղեցու և Իտալիայի ազատության գաղափարի կողմնակիցներից անվանի աստվածաբան Կ. Պասսալիան վերջերս մի «տետրակ» է հրատարակել այդ մասին: Ամսագրի գնահատմամբ՝ աստվածաբանն այդ աշխատանքում ընդգծում է այն միտքը, որ նախ՝ «պապին աշխարհական իշխանութիւն ունենալը հաւատոյ մասն չէ, հարկաւոր բան մը չէ, և երկրորդ՝ թէ պապը պարտական է Իտալացոց հետ համաձայնացնելու, ապա թէ ո՛չ ինքը պատճառ կլինի այն մեծ հերձուածին որ պատրաստ է գալու և Իտալիան պապէն բաժնելու»[6]: Կ. Պասսալիան կույր է անվանում բոլոր նրանց, ովքեր չեն հասկանում Իտալիայի ցավալի ու վտանգավոր վիճակը և «իտալական եկեղեցւոյն քակտումն», քանզի եկեղեցականների մեծ մասը աշխարհականների հետ համաձայն չէ, շատ եպիսկոպոսներ կտրվել են ժողովրդից, իսկ պապն այդ պայմաններում

[1] «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:
[2] Տես Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 105.
[3] «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:
[4] «Մասյաց աղավնի», 1861, 1 հուլիսի, թիվ ԺԳ, էջ 156:
[5] «Մասյաց աղավնի», 1861, 1 սեպտեմբերի, թիվ ԺԷ, էջ 203:
[6] «Մասյաց աղավնի», 1861, 15 հոկտեմբերի, թիվ Ի, թջ 238:

նզովում է իտալացիներին: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ Կ. Պասսալիայի աշխատանքն Իտալիայում պապականների շրջանում «մեծ շփոթություն» է առաջ բերել: Ամսագրի հավաստի տվյալներով՝ պապական «Առմոնիա» թերթը մինչև 1860 թ. Կ. Պասսալիային քննադատել է պապի աշխարհիկ իշխանության մասին այլ բան գրելու համար[1]: Ներկայումս դրա համար աստվածաբանի գաղափարական ընդդիմախոսները չեն կարող «նորա խօսքերուն ոյժը կոտրել»,[2] եզրակացնում է «Մասյաց աղավնի»-ն: Կ. Պասսալիան այն հոգևորականն է, գրում է «Մասյաց աղավնի»-ն, որ «համարձակեցաւ գրելու և ամէն տեղ հրատարակելու թէ պապին աշխարհական իշխանութիւնը նորա հոգևոր իշխանութեանն ալ վնաս է, հռովմեական եկեղեցվոյ ալ»[3]: Ամսագրի հավաստի տեղեկությամբ՝ Պիուս IX-ը այդ աշխատանքի համար Կ. Պասսալիային սպառնացել է բանադրել[4], բայց վարչապետ Բ. Ռիկազոլին նրան հրավիրել է Թուրին և «վարժապետութեան պաշտօն» տվել: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ Բ. Ռիկազոլին հույս ունի, որ Կ. Պասսալիայի օրինակին աստիճանաբար կհետևեն «Իտալիոյ բոլոր եկեղեցականները և պապը ուզէ չուզէ կթողու Հռոմը Իտալիոյ թագավորին»[5]: Բ. Ռիկազոլին, Հռոմի պապին հղած նամակում փորձելով ցույց տալ նրա հոգևոր և աշխարհիկ իշխանության անհամատեղելիությունը, նշում է, որ հոգևորականության մի մասը հրաժարվել է Իտալական թագավորության պայքարից: Նա պապին հորդորում է Իտալիայի թագավորից ստանալ «հուսալի ապրելատեղ, լիակատար ազատություն և նոր մեծարում»[6]: «Մասյաց աղավնի»-ն իտալական մամուլից տեղեկացված էր, որ Բ. Ռիկազոլին իտալական խորհրդարանում արտասանած ճառում կարևորել է «պապին ձեռքէն աշխարհական իշխանութիւնը առնուլ, և ունեցած եկեղեցական իշխանութիւնը ամբողջ պահել»[7]:

1862 թ. հունվարին ֆրանսիական կառավարությունը Վատիկանում իր դեսպան Լավալետի միջոցով հարցրեց, թե արդյոք պապը չի՞ համաձայնվի հրաժարվել իր աշխարհիկ իշխանությունից՝ հանուն Կաթոլիկ եկեղեցու ներքին խաղաղության: Սուրբ աթոռի պետական քարտուղար Ջ. Անտոնելլին նրան կտրուկ մերժեց՝ հայտարարելով, որ «այդ կարգի ոչ մի զիջում չի կարող լինել ոչ Պիուս IX-ի և ոչ էլ նրա իրավահաջորդներից որևէ մեկի կողմից դարերի ընթացքում»[8]:

Չնայած պապական իշխանության բոլոր անզիջում հայտարարություններին, «Մասյաց աղավնի»-ն գտնում էր, որ Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը «հոգեվարք հիւանդի կնմանի»: Ըստ ամսագրի՝ ներկայումս անգամ եկեղեցիներն են սկսել համարձակ խոսել և գրել, որ «այս իշխանութիւնը ոչ միայն հարկաւոր չէ, այլև վնասակար եւս է պապին հոգևոր իշխանութեանը»[9]: Ամսագրի կարծիքով՝ 1862 թ. հունիսին կայանալիք եպիսկոպոսական ժողովը թեպետ պետք է փորձի պապի աշխարհիկ իշխանությունը «անխախտ և անթերի պահպանել..., բայց ամենևին հաւանական չէ, որ իւր այս նպատակին հասնի»[10]:

Ամսագրի այս դատողությունը իրավացի դուրս եկավ այնքանով, որ հունիսի 10-ին կայացած եկեղեցական ժողովում Պիուս IX-ը ուղերձով դիմեց 250 եպիսկոպոսների՝ կոչ անելով հավատարիմ մնալ Կաթոլիկ եկեղեցու պատգամներին և չզիջել իրենց դիրքերը: Նա հիշեցրեց, որ այս հարցում ինքն անկոտրում է, քանզի երկու տարի առաջ իր աշխարհիկ իշխանության հակառակորդներին բանադրել է[11]:

---

[1] *Տե՛ս Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 101.*
[2] *«Մասյաց աղավնի», 1861, 15 հոկտեմբերի, թիվ Ի, էջ 239.*
[3] *«Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 264:*
[4] *Տե՛ս Дебидур А. Указ. соч., т. 2, с. 533.*
[5] *«Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 264:*
[6] *Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 182.*
[7] *«Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 263:*
[8] *История XIX века, т. 5, с. 287.*
[9] *«Մասյաց աղավնի», 1862, 10 մայիսի, թիվ Թ, էջ 104:*
[10] *«Մասյաց աղավնի», 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 128:*
[11] *Տե՛ս История XIX века, т. 5, с. 288, Дебидур А. Указ. соч., т. 2, с. 209.*

Չնայած Հռոմի պապի ինքնավստահությանը՝ «Մասյաց աղավնու» խմբագիրը չէր կիսում նրա կարծիքը և գտնում էր, որ Պիուս IX-ի աշխարհիկ իշխանությունը օրեցօր թուլանում է: Գ. Այվազովսկու համոզմունքը հիմնված էր այն իրողության վրա, որ Իտալիայում ոչ միայն հասարակ ժողովուրդը, այլև «խիստ շատ եկեղեցականներ բողոք բարձեր են ու կբառնան անդադար ընդդէմ աշխարհական իշխանութեան»[1]:

Պիուս IX-ը բարձրաստիճան հոգևորականների դժգոհություններին, բողոքներին և աշխարհիկ իշխանությունից հրաժարվելու պահանջներին պատասխանում էր նրանց նկատմամբ խստություններ կիրառելով: Դրա արդյունքում հոգևորականության մի մասը պաշտոնը կամավոր լքեց, մյուսները պաշտոնանկ եղան: 1864 թ. դրությամբ Վատիկանին անմիջականորեն ենթակա 44 արքեպիսկոպոսական պաշտոններից թափուր էին 24-ը և 183 եպիսկոպոսական պաշտոններից՝ 84-ը[2]:

«Մասյաց աղավնի»-ն եվրոպական մամուլի հրապարակումներից տեղեկացված էր, որ Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու պահանջը միայն իտալական հոգևորականները չէին պաշտպանում: Դրա օգտին բոլորից ավելի «համարձակ բարձրացուցեր են իրենց ձայնը» նաև ֆրանսիական եկեղեցականները, որը վախեցրել է Նապոլեոն III-ին[3]: «Մասյաց աղավնու» խմբագիրը համոզված էր, որ Պիուս IX-ի աշխարհիկ իշխանության դեմ օրեցօր հզորացող պահանջը վաղ թե ուշ պսակվելու է հաջողությամբ: Նրա կարծիքով՝ դրան նպաստում է նաև Հռոմի պապը՝ իտալական խնդրի կապակցությամբ արած իր հայտարարությամբ, որը «շատ ծիծաղելի նիւթ եղաւ հասարակաց»: Պապը հայտարարել էր, որ ինչպես Հակոբ նահապետը հրեշտակի հետ ամբողջ գիշերը կռվելուց հետո նրա ոտքն ընկավ և թողություն խնդրեց, այնպես էլ իր հետ պայքարող Պիեմոնտի թագավոր Վիտորիո Էմմանուելը «պիտի ընկնի ոտքս ու մեղայ պիտի ըսէ»[4]: Կրոնի լավագույն գիտակ Գաբրիել վարդապետ Այվազովսկին Հռոմի պապի այս համեմատությունն անվանում է «զառանցանք», որովհետև ոչ մի համեմատություն չի կարելի անել Հակոբ նահապետի ու Իտալիայի թագավորի միջև: Առավել ևս, որևէ նմանություն չկա Հռոմի պապի և Աստծո հրեշտակի միջև: Ըստ Գ. Այվազովսկու՝ Իտալիայի թագավորը շատ հեռու է «Հակոբ նահապետին մեղայագոչութենէն», ով ոչ թե գիշերվա մթում է պատերազմել, այլ ցերեկվա լույսով: Նրա «միտքն ու սիրտը պիտի չհանդարտի, ինչպէս նաև բոլոր Իտալացւոց սիրտը, մինչև որ Վատիկանու վրայ չծածանի իտալական դրոշակը»[5]:

«Մասյաց աղավնի»-ն Հռոմի պապին աշխարհիկ իշխանությունից հեռացնելու պահանջը հիմնավորում է ոչ միայն կրոնական, այլև քաղաքական տեսանկյունից: Ամսագրի խմբագիր Գ. վարդապետ Այվազովսկու համոզմամբ՝ դա անհրաժեշտ է Իտալիայի վերջնական միավորումը իրականացնելու համար: Նա ամսագրի բազմաթիվ հրապարակումներում չի թաքցնում իր բարեհաճ վերաբերմունքը «օտարազգի լուծեն ազատուիլ» ցանկացող իտալացիների «ազատասիրաց պայքարի նկատմամբ»[6]: Վենետիկում ուսանած և երկար տարիներ Մխիթարյան միաբանությանը ծառայած Գ. Այվազովսկին լավ գիտեր իտալական ժողովրդի վիճակը, իրազեկ էր նրանց պայքարի սոցիալ-տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ պատճառների մասին: Ապենինյան թերակղզու իտալական պետությունների վրա ավստրիական տիրապետությունը «լուծ» համարող Գ. Այվազովսկին գտնում էր, որ իտալական խնդիրը սոսկ ազգային չէ, ուստի «եվրոպական քաղաքականութեան բոլոր ուրիշ խնդիրները գրեթէ մոռացուց»[7]: Գ. Այվազովսկու համոզմունքը հիմնված էր քաղաքա-

---

[1] «Մասյաց աղավնի», 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 128:
[2] Տե՛ս Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 314.
[3] «Մասյաց աղավնի», 1862, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 154:
[4] «Մասյաց աղավնի», 1863, 15 հունիսի, թիվ 1-2, էջ 26:
[5] Նույն տեղում:
[6] «Մասյաց աղավնի», 1860, հունվար, թիվ Ա, էջ 18:
[7] Նույն տեղում, էջ 16:

կան բավական սթափ և իրատեսական այն ընկալման վրա, որ իտալական պետություններ-ի միավորումը կարող է իրականություն դառնալ միայն եվրոպական մեծ տերությունների աջակցությամբ և համաձայնությամբ: Գ. Այվազովսկին միաժամանակ ճիշտ էր հասկանում, որ իտալացիների ազատագրական պայքարի ղեկավարությունն ստանձնած Պիեմոնտի թագավորության քաղաքականության հիմքում ընկած է «ազգասիրական հոգին, որով Իտալիոյ ազատութեանը սրտանց կփափաքի»[1]: Նա վստահ էր, որ եթե Իտալիայի հյուսիսային նահանգները միավորվեն Պիեմոնտի թագավորությանը, ապա այն «Եվրոպայի առաջնակարգ տերություններու կարգը կանցնի»[2]:

«Մասյաց աղավնի»-ն փաստում է այն իրողությունը, որ 1859 թ. «այնչափ փառավորութեամբ սկսված իտալական պատերազմը անակնկալ կերպով մը վերջացաւ՝ առանց Իտալիոյ ազատութեան խնդիրը որոշելու»[3]: Ամսագիրն իրավացիորեն նկատում է, որ 1859 թ. հուլիսի 11-ին Վիլլաֆրանկայում ձեռք բերված համաձայնությամբ և օգոստոսի 11-ին Ցյուրիխի հաշտության պայմանագրով Լոմբարդիայի նահանգը, իսկ սեպտեմբերին՝ Պարմայի, Մոդենայի և Տոսկանայի դքսությունները միավորվեցին Պիեմոնտի թագավորությանը[4], որով իտալացիների միավորման բաղձանքը մասնակիորեն կատարվեց: Նշելով, որ այս պայքարում «ճշմարտությունը իտալացիների կողմն է»[5], «Մասյաց աղավնի»-ն համերաշխություն է հայտնում նրանց հետ, ովքեր պահանջում էին Ռոմանիա գավառը դուրս բերել Հռոմի պապի իշխանությունից, որպեսզի «Հռովմը միայն գերի մնայ պապին»[6]: Այս պահանջին կողմ էր նաև Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ը, ով ցանկանում էր կարգավորել Իտալիայի և Հռոմի պապի հարաբերությունները: Այդ նպատակով նա Պիուս IX-ին առաջարկեց Ռոմանիան զիջել Իտալական թագավորությանը, որը Պապը կտրուկ մերժեց՝ հայտարարելով՝ «Non possumus» («չենք կարող»)[7]: Հռոմի պապի այս արտահայտությունն անդադար կրկնում էր նաև կարդինալ Ջ. Անտոնելլին: Նրանց հետ իր անհամաձայնությունը Գ. Այվազովսկին արտահայտում է՝ վկայակոչելով ֆրանսիացի ճանաչված իրավագետ Ա. Դյուպենին, որի համոզմամբ՝ «կարդինալ Անտոնելլիի «Ոչ կարեմք» ըսած հռչակավոր խոսքը պէտք է հասկընալ «Ոչ կամիմք»»[8]:

«Մասյաց աղավնի»-ն 1860 թ. մայիսին Ջ. Գարիբալդու ձեռնարկած Սիցիլիական արշավանքի ընթացքում անթաքույց առաջ է քաշում Հռոմը Պիուս IX պապի աշխարհիկ իշխանության տիրույթից դուրս բերելու և իտալական թագավորությանը միացնելու հարցը: Յուրաքանչյուր իտալացու մտադրությամբ, գրում է «Մասյաց աղավնի»-ն, Ջ. Գարիբալդու արշավանքի հաղթական ընթացքը միայն այն ժամանակ պիտի վերջանա, «երբ որ Հռոմն ալ առնու, երբոր Վենետիկն ալ տիրէ և այնքան ժամանակե ի վեր փափաքելի եղած Իտալոյ միութիւնն ու կատարեալ ազատութիւնը վերջապես տեսնուի»[9]: 1860 թ. սեպտեմբերին Նեապոլն ազատագրելուց հետո «Մասյաց աղավնի»-ն գրում է, որ Ջ. Գարիբալդին և Վիտորիո Էմմանուել II-ը մտադիր չեն զենքը ցած դնել, մինչև որ «Հռոմայ և Վենետիկոյ խնդիրները չլուծուին չվերջանան»[10]: Ըստ ամսագրի՝ լուրեր են պտտվում, որ վերջերս Պիեմոնտի թագավորն ու Պապը բանակցություններ են սկսել: Դրանց հիմքում ընկած է հետևյալ պահանջը. «Պապը իրեն աշխարհական իշխանութենէն պիտի հրաժարվի ու միայն եկեղեցական իշխանութեամբը Իտալիոյ դաշնակցութեան մէջ գլխաւոր պիտի համարուի»[11]:

---

[1] *Նույն տեղում, էջ 18:*
[2] *Նույն տեղում:*
[3] *«Մասյաց աղավնի», 1860, փետրվար, թիվ Բ, էջ 37:*
[4] *Տե՛ս История Италии, т. 2, с. 223-226; Дебидур А. Указ. соч., т. 2, с. 173-176.*
[5] *«Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ Դ, էջ 69:*
[6] *«Մասյաց աղավնի», 1860, մայիս, թիվ Ե, էջ 76:*
[7] *Տե՛ս Дебидур А. Указ. соч., т. 2, с. 203:*
[8] *«Մասյաց աղավնի», 1860, ապրիլ, թիվ Դ. էջ 69:*
[9] *«Մասյաց աղավնի», 1860, հոկտեմբերի, թիվ Ժ, էջ 165:*
[10] *«Մասյաց աղավնի», 1861, 15 հունվար, թիվ Բ, էջ 22:*
[11] *Նույն տեղում:*

1861 թ. փետրվարի 13-ին Նեապոլիտանական թագավորության Գանտա ամրոցի անձնատուր լինելը իտալական հայրենասիրական ուժերին «Մասյաց աղավնի»-ն չի համարում իտալական խնդրի վերջնական լուծումը: Քանի դեռ Հռոմը և Վենետիկը ազատագրված չեն «շատ դժուար է, որ «կատարեալ հանդարտութիւն գտնէ Իտալիան, մանաւանդ թէ բոլոր Եվրոպան»[1]: Փաստորեն, «Մասյաց աղավնի»-ն Հռոմի և Վենետիկի միավորումը Իտալիայի հետ անհրաժեշտություն է համարում ոչ միայն իտալացիների ազգային շահերի, այլև՝ Եվրոպայի քաղաքական հավասարակշռության պահպանման տեսանկյունից: Իտալական պատերազմի «ամենից գեղեցիկ պտուղը» «Մասյաց աղավնի»-ն համարում է «Իտալիոյ ազատիլը՝ զօրանալը և միանալը ընդ գավազանավ հայրենասէր թագաւորին»[2]:

Ամսագիրը 1861 թ. մարտի 17-ին Վիտորիո Էմմանուել II-ին Իտալիայի թագավոր ընտրելը[3] համարում է մեծ ձեռք բերում և տարվա «անմոռանալի անցքերեն մեկը»[4]: Չնայած այդ հաջողությանը՝ «Մասյաց աղավնի»-ն իտալական խնդիրը լուծված չի համարում այնքան ժամանակ, քանի դեռ «Հռոմը պապին ձեռքէն ազատելեն ետև» չի դարձել «իտալական մեծ թագավորության մայրաքաղաքը»[5]:

Ամսագիրը հակադրվում է եվրոպական պետությունների դեսպաններին հղած կարդինալ Ջ. Անտոնելլիի հավաստիացումներին, թե իբր իտալացիները «գոհ են պապին աշխարհական իշխանութենէն» և միայն Պիեմոնտի թագավորն է պապին հակառակ: Ըստ «Մասյաց աղավնու»՝ իտալական բոլոր քաղաքները ոտքի են ելել «պապին աշխարհական իշխանութեանը դէմ» և պահանջում են Հռոմը ճանաչել իրենց թագավորության մայրաքաղաքը: Այդ խնդրի լուծումը հեշտ չի լինելու, ուստի իտալացիների պահանջը «հետզհետե սաստկանալու է»[6]: «Մասյաց աղավնի»-ն Իտալիայի քաղաքական միավորման համար լրջագույն խոչընդոտը համարում է Վենետիկը չզիջելու հարցում Ավստրիայի դիմադրությունը և Պիուս IX պապի՝ ցանկացած գնով Հռոմը պահպանելու համառությունը: «Մասյաց աղավնու»-ն միշտ մտահոգում էր այն հարցը, թե ինչպես են իտալացիները հաղթահարելու Պիուս IX պապի համառությունը և ինչ ճանապարհով են Հռոմը և Վենետիկն ազատագրելու՝ «խաղաղութեամբ ու խոհեմութեամբ, թէ զենքով ու արեան հեղեղներով»[7]: Ամսագիրը ճիշտ էր տեղեկացված, որ Պիուս IX պապի աշխարհիկ իշխանությունը վերացնելը և Հռոմը իտալական թագավորության մայրաքաղաք հռչակելը ոչ միայն իտալացիների ցանկությունն է, այլև պետական այրերի պահանջը: «Մասյաց աղավնի»-ն գրեթե բառացի մեջբերում է 1861 թ. մարտի 25-ին իտալական խորհրդարանում վարչապետ Կ. Կավուրի հայտարարության[8] հետևյալ մասը. «Կերթամք մեք Հռոմ, անտարակոյս, բայց Գաղղիոյ հաւանութիւնն ընդունելէն ետև... Իսկ երբոր հասնիմք այն տեղը, եկեղեցւոյ ազատութիւնը կապահովցընեմք»[9]: Ամսագիրը համոզված էր, որ Պիուս IX-ին Հռոմից դուրս բերելը և Հռոմը միացյալ Իտալիայի մայրաքաղաք հռչակելը իտալական նոր թագավորության վճռական ցանկությունն է: Դրա վկայությունը «Մասյաց աղավնի»-ն համարում է նաև վարչապետ Բ. Ռիկազոլիի պաշտոնական հայտարարությունը, ըստ որի՝ «Իտալիան իրավունք ունի իր միութիւնը ամբողջացնելու»[10]:

Եվրոպական երկրներում իտալական դեսպաններին հղած շրջաբերական նամակում Բ. Ռիկազոլին շեշտել էր. «պիտի լուծուի անտարակոյս Հռոմայ խնդիրը», որպեսզի

---

[1] «Մասյաց աղավնի», 1861, 1 մարտի, թիվ Ե, էջ 38:
[2] «Մասյաց աղավնի», 1861, 15 մայիսի, թիվ Ժ, էջ 119:
[3] Տե՛ս История Италии, т. 2, с. 227; Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 157-158.
[4] «Մասյաց աղավնի», 1862, 15 հունվար, թիվ Բ, էջ 21:
[5] «Մասյաց աղավնի», 1862, 1 մայիսի, թիվ Թ, էջ 105:
[6] «Մասյաց աղավնի», 1862, 1 ապրիլի, թիվ Է, էջ 81:
[7] «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:
[8] Տե՛ս Канделоро Дж. Указ. соч., т. 5, с. 110.
[9] «Մասյաց աղավնի», 1861, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 130:
[10] «Մասյաց աղավնի», 1861, 1 հուլիսի, թիվ ԺԳ, էջ 156:

միաժամանակ «եկեղեցւոյ և Իտալիոյ ազատութիւնն ու պատիւը նորոգուի ու հաստատուի»[1]: Ամսագրի համոզմամբ՝ դա նաև Վիտորիո Էմմանուել II թագավորի ցանկությունն է, որ «միտք չունի զէնքը վար դնելու, մինչև որ Հռովմայ և Վենետիկոյ խնդիրները չլուծուին չվերջանան»[2]: «Մասյաց աղավնի»-ն Հռոմը համարում է «Իտալիոյ սիրտը» և համոզմունք հայտնում, որ այն «երբևիցէ պիտի միանա իտալական թագաւորութեան հետ և անոր մայրաքաղաքը պիտի լինի»[3]: Ըստ ամսագրի՝ Հռոմը Իտալական թագավորության մայրաքաղաք հռչակելու միտքը Թուրինում իր աշխատանքները սկսած խորհրդարանում կրկին հնչեցրել է Բ. Ռիկազոլին: Նա պատգամավորներին համոզիչ բացատրել է, թե ինչպես կարելի է «միաբանել հավատքը ազատութեան հետ և իտալական թագավորութիւնը հռովմէական եկեղեցւոյ հետ»:[4] Ամսագրի կարծիքով՝ այդ գործը հարկավոր է այնպես կազմակերպել, որ «ոչ Իտալիան վրդովի և ոչ Եվրոպան»[5]: Այնուհետև հարկ կլինի Ֆրանսիայից պահանջել ժամ առաջ իր զորքը դուրս բերել Հռոմից, որը Նապոլեոն III-ը սկսած 1849 թվականից չէր ցանկանում հետ կանչել՝ «վախենալով զրկվել Կաթոլիկ եկեղեցու աջակցությունից»[6]: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ Պիուս IX պապին աշխարհիկ իշխանությունից զրկելու կողմնակիցների թիվը համալրել է Հռոմում Նապոլեոն III-ի «հավատարիմ դեսպան» մարքիզ դե Լավալետտը (1806-1881): Ըստ ամսագրի՝ Իտալիայի միավորման կողմնակից Ֆրանսիայի դեսպանը[7] «միշտ կաշխատի, որ պապը կամաւորապէս հրաժարի այն իշխանութենէն ուսկից երբևիցէ պիտի զրկուի ակամայ»[8]:

1862 թ. վերլուծելով Իտալական թագավորությունում առկա քաղաքական վիճակը՝ «Մասյաց աղավնի»-ն այն բնութագրում է «անհանգիստ» և դա բացատրում նրանով, որ Հռոմի պապը համառորեն իր «աշխարհական իշխանութենէն հրաժարելու միտք չունի»[9]: Չնայած Պիուս IX պապի համառությանը, գրում է «Մասյաց աղավնի»-ն, իտալացիները ցանկանում են Հռոմն իրենց մայրաքաղաքը տեսնել և «ուրիշ կերպով անկարելի է հանդարտին»[10]: Իտալացիները տևական ժամանակ չեն դադարում պահանջել, որ Հռոմը դառնա իրենց երկրի մայրաքաղաքը, և այդ պահանջը «հետզհետե սաստկանալու վրայ է»[11]: Բոլոր իտալացիների պահանջն է, շարունակում է ամսագիրը, որ «Հռոմը պապի ձեռքէն ազատելէն ետև՝ իտալական մեծ թագաւորութեան մայրաքաղաքը լինի»[12]: «Մասյաց աղավնու» դիտարկմամբ՝ քանի որ Պիուս IX-ը «աշխարհական իշխանութենէն հրաժարելու միտք չունի»[13], և Հռոմի խնդիրը չի լուծվում նաև դիվանագիտական ճանապարհով, ուստի «Իտալիայի մեծ ազատարար Ջ. Գարիբալդին»[14] իր մտքին հաստատ դրել է մի վերջին անգամ պատերազմելով ազատագրել Հռոմը: 1862 թ. հունիսին «Հռոմ կամ մահ» կարգախոսով Ջ. Գարիբալդու ձեռնարկած Սիցիլիական երկրորդ արշավանքը թեև ավարտվեց անհաջողությամբ[15], այնուամենայնիվ չխաթարեց «Մասյաց աղավնու» հավատը Իտալիայի միավորման հարցում: Ամսագիրը համոզված էր, որ Ջ. Գարիբալդին Հռոմի ազատագրման խնդիրը

---

[1] «Մասյաց աղավնի», 1861, 1 սեպտեմբերի, թիվ ԺԷ, էջ 203:
[2] «Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:
[3] Նույն տեղում:
[4] «Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 263:
[5] «Մասյաց աղավնի», 1861, 15 հունվարի, թիվ Բ, էջ 22:
[6] Տես История XIX века, т. 5, с. 258.
[7] Տես Дебидур А. Указ. соч., т. 2, с. 202.
[8] «Մասյաց աղավնի», 1862, 15 հունիսի, թիվ ԺԲ, էջ 154:
[9] «Մասյաց աղավնի», 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 128:
[10] «Մասյաց աղավնի», 1861, 15 նոյեմբերի, թիվ ԻԲ, էջ 263:
[11] «Մասյաց աղավնի», 1862, 1 ապրիլի, թիվ Է, էջ 84:
[12] «Մասյաց աղավնի», 1862, 1 մայիսի, թիվ Ժ, էջ 105:
[13] «Մասյաց աղավնի», 1862, 1 հունիսի, թիվ ԺԱ, էջ 128:
[14] «Մասյաց աղավնի», 1862,15 օգոստոսի, թիվ ԺՁ , էջ 186:
[15] Տես История Италии, т. 2, с. 245-246; История XIX века, т. 5, с. 287-288; Канделоро Дж., Указ. соч., с. 220-223:

«ավելի փառաւոր կամ ահաւոր կերպով պիտի լուծուի»[1]: «Մասյաց աղավնի»-ն մեծ հույսեր էր կապում 1864 թ. հետ՝ գտնելով, որ այդ տարում իտալացիները ձեռք կբերեն իրենց «երկու մեծ ազատութիւնները», այսինքն՝ Վենետիկը կազատվի Ավստրիայից, իսկ «Հռոմը պապին տիրապետութենէն»[2]: Ամսագիրը դրան հավատում էր դեռևս 1861 թ. իտալական պետությունների մասնակի միավորումից հետո և վստահ էր, որ «Իտալիան՝ պատերազմական հոգւով լցուած, ազգային ազատագրութեան կրակովը վառուած»[3] մի օր անպայման միավորվելու և համալրելու է եվրոպական «առաջնակարգ տէրութիւնների շարքը»[4]: «Մասյաց աղավնի»-ն չդարձավ Հռոմի պապի աշխարհիկ իշխանության և Իտալիայի վերջնական միավորման ժամանակակիցը, քանի որ 1865 թ. դադարեց լույս տեսնել: Ամսագրի կանխատեսումը իրականություն դարձավ 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ, երբ սեպտեմբերի 8-ին Վիտորիո Էմմանուել II-ը պապին վերջնագիր ներկայացրեց: Սեպտեմբերի 20-ին իտալական զորքերը մտան Հռոմ, իսկ Պիուս IX-ը հրաժարվեց իր աշխարհիկ իշխանությունից[5]: Պիուս IX պապը իրեն հայտարարեց «բարոյական գերի», «Վատիկանի գերի» և մինչև իր մահը Վատիկանը չլքեց[6]: Հոկտեմբերի 2-ին Հռոմում անցկացված հանրաքվեն կողմ արտահայտվեց Իտալական թագավորությանը միավորվելու և երկրի մայրաքաղաք հռչակելու օգտին[7]: «Մասյաց աղավնու» կանխատեսումը իրականություն դարձավ:

Феликс Мовсисян, ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX. Итальянская национально-освободительная борьба XIX века нашла широкое отражение в журнале «Масьяц агавни», который издавался в Феодосии. В числе ряда вопросов, связанных с национальной борьбой итальянцев, «Масьяц агавни» в своих публикациях освещал также вопрос о лишении светской власти папы Римского Пия IX, возникший в ходе этой борьбы. Редактор журнала Габриэл архимандрит Айвазовский к этой проблеме подходил с точки зрения религиозной идеологии и необходимости политического объединения Италии. К этим вопросам он обращался в цикле статей под названием «Духовная и светская власть Римских пап».

Г. Айвазовский критиковал папу Пия IX и его кардиналов, которые прилагали все усилия и притесняли верующих прихожан, чтобы добиться их покорности и сохранить светскую власть. По его мнению, сторонники папизма допускали значительную ошибку, утверждая, что требование лишить папу светской власти нанесет вред его духовной власти. Габриэл архимандрит Айвазовский вступил в конфронтацию с приверженцами светской власти папы, по убеждению которых власть пап является божественной и дана свыше – от Церкви Христовой, в связи с чем папы приобретают безграничную духовную и светскую власть. Редактор «Масьяц агавни» опровергал этот подход и, ссылаясь на Евангелия, отмечал, что в земной жизни у Христа не было наместников, Он себя не считал ни царем, ни правителем, а являлся основой основ Церкви, ее главой, первосвященником, архипастырем и владыкой. Все апостолы были равны, Бог никого из них не рукоположил во главу Церкви, а наделил только духовной, но не светской властью. Следовательно, как отмечал Г. Айвазовский, Папы Римские, которые считают себя наместниками Бога на земле и преемниками апостола Петра, могут иметь только духовную власть.

---

[1] *«Մասյաց աղավնի», 1868, 15 սեպտեմբերի, թիվ ԺԸ, էջ 214:*

[2] *«Մասյաց աղավնի», 1864, 15 հունվարի, թիվ 1, էջ 18:*

[3] *«Մասյաց աղավնի», 1863, 15 հուլիսի, թիվ 13-14, էջ 224:*

[4] *«Մասյաց աղավնի», 1862, հունվար, թիվ Ա, էջ 18:*

[5] *История Италии, т. 2, с. 304; История XIX века, т. 5, с. 251; Канделоро Дж., Указ. Соч., с. 418-419.*

[6] *Տե՛ս Католическая энциклопедия. М., 2007, с. 1506-1510; Большая советская энциклопедия, т. 19, М., 1975, с. 1560.*

[7] *Տե՛ս История Италии, т. 2, с. 251; История XIX века, т. 5, с. 304; Канделоро Дж., Указ. Соч., с. 423-424.*

С точки зрения редактора «Масьяц агавни», светская власть Папы Римского является серьезным препятствием для устранения политической раздробленности итальянских государств. По его мнению, вековая мечта итальянцев иметь единое итальянское королевство осуществится только тогда, когда папа Римский откажется от своей светской власти, присоединится к провозглашенному в 1861 году Итальянскому королевству, а Рим станет столицей объединенной Италии.

Редактор «Масьяц агавни» в своих публикациях последовательно проводил мысль о том, что зажженные пламенем свободы итальянцы рано или поздно объединятся, и провозглашенное ими Итальянское королевство станет одной из ведущих стран Европы.

Ключевые слова: Италия, Рим, освободительная борьба, независимость, объединение, Пий IX, духовная власть, светская власть.

Feliks Movsisyan, THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI" ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER. The Italian national-liberation movement found a warm response in the magazine "The Masyats Aghavni'' issued in Theodosia in 1860-1865. The magazine represented the Armenian-national conservative current. In addition to some issues related to the Italian national movement, the magazine also touched upon the deprivation of Pope Pius IX (Pope of Rome) of his secular power. Archimandrite Gabriel Aivazovsky, the editor of the magazine, observed the demand of the freedom-loving Italians from religious ideology and political unification point of view. He touched upon thas issue in his articles entitled "The spiritual and secular power of Popes of Rome".

G. Ayvazovsky considered inadmissible actions of Pope Pius IX and his cardinals who made great efforts and exerted pressure upon the believers to maintain the secular power of the High Priest. In his understanding, the supporters of the Papacy made a huge mistake insisting on the fact that the demand to deprive the Pope of his secular power was a real danger to his spiritual power. G. Ayvazovsky countervailed the supporters of the Pope, who were of the opinion that the Popes' power was divine given to the Church of Jesus, therefore was a limitless spiritual an secular power. The editor of "The Masyats aghavni" refuted that approach and, quoting The Gospel, stated that Jesus Christ didn't have any secular power and didn't consider himself a king. He was the base of the Church, Head, Supreme Priest, Pastor and the Lord. The Creator didn't appoint any of his apostles a Church head and granted them only a spiritual power. Thus, Ayvazovsky stated that all the Popes of Rome who considered themselves vicars of the Lord in the secular life and successors of St. Peter the Apostle, might have only a spiritual power.

The editor of "The Masyats Aghavni" thought that the secular power of Pope Pius IX was a serious obstacle to the liquidation of the political separation of the Italian states. In his understanding, the Italians' age-long dream to have a united kingdom would be realized only when Pius IX renounced his secular power. Only then the City of Rome would join the Italian Kingdom and become the capital of the whole state.

The editor of the magazine "The Masyats Aghavni'' in his publications consistently asserted that the freedom-loving Italians would be united sooner or later and their declared Italian Kingdom would certainly become one of the European advanced countries.

Keywords: Italy, Rome, liberation struggle, independence, unification, Pius IX, spiritual, secular power.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200